Ս. Լուսաւորչի և վանքի մինչև բարձրացող ափափայ լեռնակի վերայ որի մօտ են գոմանոցը և լն. արտերից դէպ ի այս կալը կայ շինած բաւական լայն և ցանցաւոր ճանապարհ, բայց այժմ խափանուած է։

(Շուշի—Նոյեմբեր) Ց. Վ. Մ.

Անցեալ 1889 թուականին վախճանեցան երկու նշանաւոր եկեղեցականներ Եւրոպայում, որոց անուններն անծանօթ չեն հայ ընթերցողներին. սոքա են գերմանացի (քաթոլիկ) ուսուցչապետ երևելի Աստուածաբան Դեօլլէնգէրն, որ բողոքեց Պապի անսխալականութեան դէմ և ֆրանսիացի երևելի քարոզիչ Բերսիէն (բողոքական)։

ԴԷՕԼԼԻՆԳԷՐ

— Ոչ միայն Բաւարիայի, այլ և բոլոր Գերմանիայի պարծանք՝ իւր ընդարձակ աստուածաբանական հմտութիւններով երևելի ուսուցչապետ Իգնատիոս Դէօլլինգէրը ծնաւ 28ին փետրուարի 1799 թուականին. 1826 թուականին հրաւիրուեցաւ ուսուցչապետ եկեղեցական պատմութեան և եկեղեցական իրաւագիտութեան Միւնխէնի համալսարանում։ Միևնոյն ժամանակ նա պետական խորհրդարանի անդամ էր և Բաւարիայի գիտութեանց ճեմարանի անդամ։ Գերմանիայի քաղաքական կեանքի յուզուած ժամանակ 1848 և 1849 թուականներին Դէօլլինգէրը Ֆրանկֆուրտի պարլամենտի անդամ էր և ղեկավար քաթոլիկ կուսակցութեան։ Այս ժամանակ նա իւր ճառերում և երկասիրութեանց մէջ ջերմեռանդ անդրալեռնական էր երևում և այդպիսի մնաց մինչև իւր ճանապարհորդութիւնը Հռոմ 1857 թ. և Հռոմի տիեզերական ժողովը 1870 թուականին, ուր ընդունուեցաւ Հռոմայ պապի անսխալականութեան վարդապետութիւնն, որոյ դէմ բողոքեց և մերժեց այն ուսուցչապետ Դէօլլինգէրը։ 1872 թ. Քաթոլիկ եկեղեցին բանադրեց նրան. բայց այս ընաւ չխախտեց ծերունի աստուածաբանի համոզմունքներն, և նա սկզբնապատճառ եղաւ հին քաթոլիկ կոչուած կուսակցութեան կազմուելուն, և զարթեց-

բեց քրիստոնեայ եկեղեցեաց միութեան խնդիրը։ Դէօլլինգէրը բաժանուեցաւ քաթոլիկ եկեղեցուց ոչ թէ թեթեւամիտ և անձնական հաշիւների պատճառով (քաթոլիկ եկեղեցական իշխանութիւնը պատրաստ էր ամեն կերպով նրան շահելու)։ այլ զի չափազանց արդարասէր էր և յոյժ հմուտ աստուածաբան։ Նա չէր կարողանում հաշտուել պապի անսխալականութեան հետ։ որ սպանում է ամեն ազատութիւն քրիստոնէական եկեղեցու մէջ։ որ քրիստոնէական վարդապետութեան հիմունքներից մէկն է։ Դէօլլինգէր։ որ ինֆլուէնցա հիւանդութիւնից մեռաւ։ մինչև իւր կեանքի վերջը։ ընայելով 90 տարեկանից աւելի էր։ պահպանում էր մարմնոյ առուգութիւնն և մտաց թարմութիւնը։ միշտ աշխատանաց մէջ լինելով։ Նա առանց գաւազանի մեն էր գալիս։ առանց ակնոցի կարդում և խօսում սուր և պարզ ձայնով։ Նորա այս առողջ վիճակը հետևանք էր նորա պարզ։ գրեթէ ճգնաւորական կենցաղավարութեան։ Նա երբէք գինի կամ գարեջուր չէր խմում։

ՔԱՐՈԶԻՉ ԲԵՐՍԻԷ

Եւգենիոս Բերսիէ ֆրանսական բողոքական եկեղեցու նշանաւոր քահանաներից մէկը։ վախճանեցաւ յանկարծական մահուամբ 1889 թ. Նոյեմբերի 18ին։ 58 տարեկան հասակում։ Մաքուան նախընթաց օրն Օրնանս բուլվարի մշակների ժողովում իւր սովորական եռանդով և ճարտարութեամբ քարոզ խօսելից յետ գիշերուայ 11 ժամին վերադարձաւ տուն և երկու ժամին վախճանեցաւ։ Եւգենիոս Բերսիէն։ որ հաշուագիտ մտաւոր և բարոյական յատկութեանց տէր էր։ ծնաւ 1831 թուականին Վ. գաւառում։ շատ համեստ և աղքատ գերդաստանի մէջ։ Իւր սկզբնական ուսումն ստացաւ իւր դիւցազնական հաստատամտութեան շնորհիւ։ Բայց այս էլ մինչև վերջը չկարողացաւ հասցնել չքաւորութեան պատճառով։ ուստի և 18 ամեայ Բերսիէն նաւ նստեց գնաց Ամերիկա։ որ այնտեղ գործակատարի կամ ուսուցչի պաշտօն ստանձնելով ձեռք բերէ միջոց իւր աստուածաբանական ուսումն կատարելագործելու և իւր կոչման՝ քահանայութեան պաշտօնին ծառայելու համար։ Այս յաջողեցաւ էլ նրան։ 1851ին վերադառնալով Փարիզ։ նա սերտ բարեկամական և ընտանեկան կապերով կապուեցաւ իւր նախկին ընկեր Էդմոնդ Պրեսանսէնի հետ (այժմ անդամ ծերակոյտի)։ Այս ժամանակից նա էլ Փարիզից չէ հեռացել և կատարում էր քահանայի պաշտօն Փարիզի այլ և այլ բողոքական եկեղեցիներում։ Վերջին ժամանակ Էռուալ թաղում